

սէր քրիստոնեայ ժողովուրդներու. Ամէն :

Այս ցանկալի նամակը դրուեցաւ 1116 թուին, ըստ հայկական տոմարին, իսկ ի Ծննդենէ Տեառն 1666ին, Հոկտեմբեր ամսոյն 12ին, ծառաներու ծառայէն Տեառն Յիսուսի Քրիստոսի :»

Յակոբ Կաթողիկոս Ամենայն Հայոց (11)

Երբ Միջագետքի Յովհաննէս Արքեպիսկոպոսը այս նամակով Հռոմ կը հասնի, Աղեքսանդր է. Քահանայապետը վախճանած էր (22 Մայիս 1667), եւ կարգինալները հետամուտ էին անոր յաջորդին ընտրութեան : Այսուհանդերձ Հաւատոյ Տարածման Սրբազան Ժողովին Քարտուղարը կը հարցնէ Յովհաննէս Արքեպիսկոպոսին՝ թէ արդեօք Կաթողիկոսին նամակը կ'ուզէ՞ կարգինալներուն յանձնել, որպէսզի չստիպուի երկարօրէն սպասել : Յակոբ Զուղայեցի Հայրապետին պատուիրակը կը պատասխանէ՝ թէ երզումով պարտաւորուած է նամակը յանձնել սոսկ Սրբոյ Պապին : Քահանայապետական ընտրութենէն յետոյ Յովհաննէս Արքեպիսկոպոս կը ներկայանայ Ն. Ս. Կղեմէս Թ. ի եւ կը յանձնէ կաթողիկոսական նամակը : Ծայրագոյն Քահանայապետը մեծ սիրով կ'ընդունի հայ Պատուիրակը, եւ ոսկեհիւս շուրջառ մը կը նուիրէ Յակոբ Կաթողիկոսին :

Ահաւասիկ ի՛նչ կը գրէ այս մասին Հաւատոյ Տարածման Սրբոյ Ժողովին Վարիչը՝ Կարգինալ Անտոն Պարպերինի իր 27 Օգոստոսի (11) Cong. Gen. Vol. 222, fol. 95.